2024, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (665)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 25-ամյակի առիթով

Վեհափա՛ռ Ամենայն Հայոց,

Ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձեր հայրապետական գահակալության 25-ամյակը: Թող Աստված պահպանի Ձեր անբեկանելի կորովն ու աստվածշնորհ իմաստությունը՝ նախապետելու և անխորտակ պահելու ներկա ժամանակի փոթորկահույզ օվկիանի մեջ գոյամաքառող Հայաստան աշխարհի տապանը, հաղթահարելու բոլոր սպառնալիքներն ու արկածախնդրությունները: Մեր մեծագույն մաղթանքն է, որ Ձերդ Սրբությունը շուտով վայելի իր փափագած հզոր ու անվտանգ հայրենիքի և նրա գրկում ծաղկող Հայ Եկեղեցու երանությունը, մեր ժողովրդի քրիստոնյա վերազարթոնքի սրտաջերմ բերկրանքը:



Վեհափա՛ռ Տեր, օրհասական ու տագնապալի այս ժամանակներում, երբ մեր վշտալուկ ժողովրդի հայացքը հառած է Եկեղեցուն և Ձեզ՝ ակնկալելով փրկության անսխալական ճանապարհ ոչ միայն հոգևոր, այլև համազգային ու համապետական առումով, մեր տառապյալ ժողովրդի և Բարձրյալ Աստծու միջև Ձեր ողջախոհ հոգեմիջնորդությամբ կարելի դարձնենք, որ բեկանվեն մեր հայրենիքի և ազգի գոյաբանական բոլոր սպառնալիքները, զորություն պարգևվի մեր բազմախոց ու բազմաչարչար ժողովրդին՝ ամուր կառչած մնալու հայրենի հողին, պահպանելու, բարեկարգելու և հզորացնելու այն, ինչպես Դուք եք ծաղկեցնում Աստծու տաճարները և պահպանում քրիստոնեական հավատքը:

Ձերդ Վեհափառության առաքելությունը թող մխիթարություն, ոգի և օրհնություն շնորհի մեր տառապյալ և ընկճյալ ժողովրդին, ապաքինում՝ կարեվեր հայրենիքին:

Ամենազորեղ և ամենատես Աստված թող սատար լինի Հայ Եկեղեցուն և նրա օծյալ Գահակալին՝ վերակերտելու հոգևոր և զորեղ Հայաստանը՝ իր պատմական աշխարհագրությամբ ու քրիստոնյա հոգեբանությամբ, ուր տեղ չունեն մեղքերը, և թագավորում են միմիայն առաքինություններն ու սերը:

Ամենայն Հայոց Հայրապետի եկեղեցաշահ, հայրենաշահ և ազգաշահ գործունեությունը թող անխափան լինի և բազմապատկվի: Թող Սուրբ Հոգու շնորհազարդ ներկայությունը մշտնջենական լինի նրա կյանքում, և զորությունն անսպառ լինի՝ ի փառս հայրենիքի և Եկեղեցու այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:

Որդիական սիրով
և խոնարհումով՝
«Քրիստոնյա Հայաստանի»
խմբագրություն

Տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով

Նոյեմբերի 5–7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ատենապետությամբ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանի, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի և օրհնության խոսքից հետո ժողովը վարելու հրավիրվեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Սեպտեմբերի 27–30-ին տեղի ունեցած Մայր տաճարի վերաօծման, մյուռոնօրհնության արարողությունների և հարակից միջոցառումների վերաբերյալ ամփոփիչ զեկույցով հադես եկավ համակարգող հանձնախմբի ատենապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը: Ներկայացվեց, որ սրբազան արարողություններն անցկացվեցին մեծ հանդիսավորությամբ և ընդգրկեցին եկեղեցական ու ժողովրդական լայն մասնակցություն՝ նոր հույս և հոգևոր մխիթարություն պարգևելով համայն հավատավոր մեր ժողովրդին: Ամփոփ տեղեկություններ փոխանցվեց արարողություններին մասնակիցների, հրատարակությունների, լուսաբանման, իրականացված տեխնիկական ու կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ:

Ժողովականներն իրենց որդիական երախտագիտությունը հայտնեցին Ամենայն Հայոց Հայրապետին՝ Մայր տաճարի հիմնանորոգության համար՝ բարձր գնահատելով Մայր տաճարի վերաօծման, մյուռոնօրհնության և հարակից միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում ներգավված անձանց ջանքերը, որոնք իրենց նպաստը բերեցին արարողությունների պատշաճ իրականացմանը:

Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանը Գերագույն հոգևոր խորհրդի ժողովին ներկայացրեց Մայր Աթոռում կատարվող բարեկարգման և շինարարական աշխատանքների ընթացքը: Այս կապակցությամբ ԳՀԽ-ի անդամները գոհունակություն հայտնեցին իրականացվող աշխատանքների առիթով՝ կարևորելով համայն հայության հոգևոր կենտրոնի բարեզարդմանն ու պայծառությանն ուղղված ջանքերը:

Սփյուռքում ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրների մասին զեկուցեց Մայր Աթոռի հայեցակարգային գրասենյակի տնօրեն Տ. Վազգեն արք. Միրզախանյանը՝ անդրադառնալով սփյուռքի համայնքներում ազգային ինքնությանը, հայեցի կրթությանը, հայոց լեզվի ու մշակույթի անաղարտ պահպանմանը սպառնացող մարտահրավերներին, ինչպես և դրանց հաղթահարմանը՝ ի նպաստ եկեղեցու ու սփյուռքում գործող ազգային կառույցների դերակատարությանը:

➥ էջ 2

Տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով

➥ էջ 1

Ընդգծելով հայրենիքում և սփյուռքում երիտասարդության ներգրավմամբ համայնքների ամրապնդման, կրթական նոր ծրագրերի մշակման ու իրագործման, դպրոցների և մշակութային կենտրոնների զարգացման անհրաժեշտությունը, ազգային ինքնության պահմանման ու հոգևոր արժեքների ամրապնդման հրամայականը՝ ԳՀԽ-ն թելադրեց հարցի վերաբերյալ կատարել համակողմանի ուսումնասիրություն:

Հայրենական կյանքում առկա մարտահրավերների և դրանց հաղթահարման ուղղությամբ գործադրվող ջանքերի, արցախահայերի իրավունքների պաշտպանության, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության նկատմամբ Ադրբեջանի ոտնձգությունների և հուշարձանների պաշտպանության առնչությամբ ձեռնարկվող քայլերի մասին զեկույցներով հանդես եկան Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը, արտակարգ և լիազոր դեսպան տիար Արտակ Ապիտոնյանը, Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամի տնօրեն տիար Արման Թաթոյանը, Արցախի մարդու իրավունքների պաշտպան տիար Գեղամ Ստեփանյանը, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի (ՀԵՈՒՀ) փոխտնօրեն տիար Ռաֆֆի Քորթոշյանը:

ԳՀԽ-ի անդամներն իրենց մտահոգությունն արտահայտեցին Հայաստանի անվտանգային և ներքաղաքական հիմնախնդիրների կապակցությամբ՝ կարևորելով ազգային միասնության և համախմբման անհրաժեշտությունը՝ ի նպաստ հայրենիքի զորացման և ինքնիշխանության պահպանման:

Ժողովականները հաստատեցին, որ մինչ օրս Ադրբեջանում ապօրինի պահվող գերիների վերադարձի, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման, արցախահայերի իրավունքների պաշտպանության, Ադրբեջանի ցեղասպան գործողությունների դատապարտման հիմնախնդիրները պետք է բաց պահել միջազգային օրակարգում՝ զուգահեռ աշխատանքներ տանելով համազգային միաբանության, ազգային ներուժի կենտրոնացման, Հայաստան և սփյուռք գործակցության պատշաճ կազմակերպման ուղղությամբ: Գերագույն հոգևոր խորհուրդը վերահաստատեց իր հանձնառությունն աջակցելու բոլոր այն նախաձեռնություններին, որոնք ուղղված են հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանը, ազգային ինքնության պահպանմանը և տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

ՔԴԿ-ի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը ժողովականներին ներկայացրեց կիրակնօրյա դպրոցների կրթական ծրագրի ճանապարհային քարտեզը, որի նպատակն է կիրակնօրյա դպրոցների գործունեության համակարգումն ու մատաղ սերնդի հոգևոր կրթության և դաստիարակության արդյունավետության բարձրացումը:

ԳՀԽ-ն շնորհակալությամբ ընդունեց զեկույցը՝ թելադրելով մշակել և ներդնել միասնական կրթական ծրագրեր, որոնք կհամապատասխանեն ժամանակակից պահանջներին ու կխթանեն երեխաների հոգևոր-բարոյական նկարագրի և գիտակցության կերտմանն ու ազգային արժեքների պահպանմանը:

ԳՀԽ-ն քննարկեց նաև եկեղեցական-ներկայացուցչական ժողովի (ԵՆԺ) գումարման հարցը: Անդրադարձ կատարվեց ժողովի նախապատրաստական աշխատանքներին՝ օրակարգի ձևավորմանը, պատգամավորների ընտրությանը և կազմակերպչական հարցերին:

Ժողովի ընթացքում քննարկման առարկա դարձան նաև թեմերի գործունեությանը, Եկեղեցու կանոնական և վարչական կյանքին առնչվող այլ հարցեր:

Գերագույն հոգևոր խորհրդի ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և Պահպանիչ աղոթքով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Նոյեմբերի 1-ին **«Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության գլխավոր գործադիր տնօրենին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն դոկտոր հայր Թոմաս Շվարցին:

Հանդիպմանը Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց հայր Թոմաս Շվարցին՝ կազմակերպության կողմից իրականացվող բարեգործական ու սոցիալական աջակցության ծրագրերի առնչությամբ, որոնք ուղղված են բռնի տեղահանված արցախահայերին, պատերազմից տուժած և կարիքավոր ընտանիքներին: Այս առիթով Նորին Սրբությունը կարևորեց «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության և Մայր Աթոռի միջև առկա համագործակցությունը, որը ձևավորվել է դեռևս 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո:

Իր խոսքում Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ քույր Եկեղեցիների հետ Հայոց Եկեղեցու ունեցած ջերմ կապերին ու փոխհարաբերություններին՝ դրա վառ վկայություն նկատելով նաև նոյեմբերի 10-ին Ադրբեջանում կազմակերպվող COP29 կլիմայական գլոբալ գագաթնաժողովի նախօրեին քրիստոնեական Եկեղեցիների և կառույցների աղոթակցությունը Հայ Եկեղեցուն՝ հանուն արցախահայերի իրավունքների պաշտպանության և գերիների ազատ արձակման:

Իր հերթին հայր Թոմաս Շվարցը պատրաստակամություն հայտնեց շարունակելու գործակցությունը Հայ Եկեղեցու հետ՝ Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցելով կազմակերպության մարդասիրական առաքելության, ինչպես և տեղահանված ու կարիքավոր ընտանիքների համար իրականացվող զարգացման և սոցիալական աջակցության ծրագրերի մասին՝ ուղղված աշխատանքի ապահովման նպատակով մասնագիտական հմտությունների ուսուցմանը:

Նոյեմբերի 2-ին **Հունաստանի հայոց թեմի և Կրետեի ուխտավոր հայորդիներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի հայոց թեմի թեմական կառույցների ներկայացուցիչներին և Կրետեի ուխտավոր հայորդիներին, որոնք Սուրբ Էջմիածին են ժամանել թեմական առաջնորդ Տ. Խորեն վրդ. Առաքելյանի եպիսկոպոսական ձեռնադրության և օծման առիթով:

Հանդիպմանը ներկա էր նաև Կրետե կղզու Հերակլիոնի Սուրբ Կարապետ եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը:

Իր հայրական օրհնությունը բաշխելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց թեմական առաջնորդի ձեռնադրության և օծման արարողություններին նրանց ներկայության կապակցությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց հայորդիներին զորավիգ ու նեցուկ լինել իրենց առաջնորդին իր առաքելության բարեհաջող իրականացման համար՝ ի խնդիր համայնքի և թեմի բարեզարդման ու բարգավաճման:

Նոյեմբերի 4-ին **Պրահայի արքեպիսկոպոսին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Պրահայի արքեպիսկոպոս Յան Գրաուբների գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Կենտրոնական Եվրոպայի և Շվեդիայի հայրապետական պատվիրակ Տ. Տիրան եպս. Պետրոսյանի և Չեխիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Բարսեղ վրդ. Փիլավչյանի: Պատվիրակության կազմում էին Չեխիայի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Ողջունելով հյուրերին՝ Վեհափառ Հայրապետը գուհանկությամբ անդրադարձավ Չեխիայի Կաթոլիկ Եկեղեցու և հայ համայնքի միջև ձևավորված սերտ հարաբերություններին ու գործակցությանը, ինչպես և չեխահայության նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց նաև հայ ժողովրդի առջև ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, արցախյան պատերազմի աղետալի հետևանքներին և դրանց հաղթահարմանն ուղղված քայլերին՝ ողջունելով քույր եկեղեցիների և բարեկամ երկրների ջանքերը՝ ի խնդիր տարածաշրջանում խաղաղության և կայունության վերահաստատման: ➥ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Պրահայի արքեպիսկոպոսին

➥ էջ 2

Նորին Սրբությունն ընդգծեց, որ պատվիրակությունը Հայաստան այցի շրջանակներում առիթ կունենա շփվելու արցախահայերի հետ՝ հաղորդ դառնալով նրանց խնդիրներին:

Իր հերթին Չեխիայի արքեպիսկոպոսը նշեց, որ տեղեկացված է Հայաստանում առկա ծանր կացությանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է այցելել իր զորակցությունն ու համերաշխությունը բերելու հայ ժողովրդին և եկեղեցուն:

Վերջում Նորին Սրբազնությունը, շնորհակալություն հայտնելով Հայոց Հովվապետին Սուրբ Էջմիածնում հյուրընկալության համար, կարևորեց երկու եկեղեցիների միջև ձևավորված փոխգործակցությունը՝ ի նպաստ քրիստոնեական արժեքների զորացման ու պահպանման և առկա մարտահրավերների հաղթահարման:

Նոյեմբերի 5-ին **Ալֆորվիլ քաղաքի քաղաքային իշխանության և Սուրբ Պողոս – Սուրբ Պետրոս եկեղեցու ծխական խորհրդի անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի քաղաքային իշխանության և Ալֆորվիլի Սուրբ Պողոս – Սուրբ Պետրոս եկեղեցու ծխական խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր եպս. Խաչատրյանի:

Հանդիպմանը ներկա էր Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին:

Գրիգոր սրբազանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ներկայացրեց հյուրերին՝ տեղեկացնելով, որ վերջիններս Հայաստան են ժամանել Ալֆորվիլ և Օշական քույր քաղաքների համագործակցության շրջանակներում, ինչպես նաև իր եպիսկոպոսական ձեռնադրությանը մասնակցելու համար:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նկատեց, որ պատվիրակության այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ևս մեկ վկայություն է հայ-ֆրանսիական բարեկամության, որում իր ներդրումն ունի նաև ֆրանսահայ համայնքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախությամբ ընդգծեց թեմական առաջնորդի ձեռնադրության և օծման արարողություններին պատվիրակության մասնակցությունը:

Իր խոսքում Հայոց Հայրապետը նշեց նաև, որ առանձնակի գոհունակություն է տեսնել Ալֆորվիլի քաղաքային իշխանության և հայ համայնքի սերտ գործակցությունը, ինչպես և հայ-ֆրանսիական բարեկամական կապերի զարգացումը՝ համատեղ տարբեր ձեռնարկների իրագործման միջոցով:

Նորին Սրբությունը, անդրադառնալով տարածաշրջանում ստեղծված ծանր կացությանը, իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին՝ Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման, Արդբեջանում պահվող գերիների ազատ արձակման, արցախահայերի իրավունքների պաշտպանության գործում ցուցաբերվող աջակցության և զորակցության համար:

Իր հերթին Ալֆորվիլի քաղաքապետ Լուկ Կարվոնասը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, հավաստիացրեց Հայոց Հովվապետին, որ անհրաժեշտ ջանքերը կգործադրվեն հայ-ֆրանսիական կապերի առավել սերտացման ու խորացման ուղղությամբ:

Նոյեմբերի 8-ին **Վերապատրաստման դասընթացներին մասնակցող քահանաներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց վերապատրաստման դասընթացներին մասնակցող Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած քահանաներին:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը փոխանցելով հոգևորականներին, ընդգծեց Մայր Աթոռում կազմակերպվող վերապատրաստման դասընթացների կարևորությունն իրենց հոգևոր սպասավորության առավել արդյունավորման գործում:

Նորին Սրբությունը նկատեց, որ աշխարհասփյուռ հայոց թեմերում ծառայող հոգևորականների համախմբումը Մայր Աթոռում լավագույն առիթ է վերապատրաստման ծրագրի շրջանակներում ամբարած գիտելիքներով և հովվական կյանքի փորձառությամբ առակա մարտահրավերների, հովվական կյանքին առնչվող ու հավատացյալներին հուզող տարբեր հարցերի շուրջ համատեղ քննարկումներ կազմակերպելու և դրանց հաղթահարմանն ուղղված ընդհանուր մոտեցումներ ձևավորելու:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքը բերեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանին ծրագրի իրականացման գործում ցուցաբերած հետևողականության համար:

Վերջում Վեհափառ Հայրապետը քահանաներին մաղթեց ուժ, կորով ու երկնավորի առաջնորդությունն իրենց հոգևոր առաքելության մեջ:

Եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Նոյեմբերի 3-ին Միածնաէջ Մայր տաճարում, հընթացս սուրբ և անմահ պատարագի, տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում: Ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ եպիսկոպոսության աստիճանի արժանացան Արգենտինայի և Չիլիի հայոց թեմի առաջնորդ Տ. Առեն վրդ. Շահենյանը, Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր վրդ. Խաչատրյանը, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Նարեկ վրդ. Ավագյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Մակար վրդ. Հակոբյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Պարթև վրդ. Բարսեղյանը և Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Խորեն վրդ. Առաքելյանը:

Սրբազան արարողությունների առիթով Սուրբ Էջմիածին էին ժամանել Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը, Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, հասարակական գործիչներ, ուխտավորներ Հայաստանից, Արգենտինայի, Ֆրանսիայի և Հունաստանի հայոց թեմերից:

Նախորդ օրը՝ առավոտյան, Մայր տաճարում՝ Իջման Սուրբ Սեղանի առջև, կատարվեց ուխտադրման արարողությունը: Եպիսկոպոսացու վարդապետները, ծնրադիր վերահաստատելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Ամենայն Հայոց Հայրապետին հավատարմության ուխտը, եկեղեցականների ներկայությամբ ստորագրեցին իրենց երդմնագրերը:

Սուրբ պատարագն սկսվեց հայրապետական հանդիսավոր թափորով, որով ամպհովանիի ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջնորդվեց դեպի Միածնաէջ Մայր տաճար: Մինչ սրբազան խորհուրդը Մայր տաճարի Սուրբ Ստեփանոս Նախասարկավագի խորանին կատարվեց ընծայացուների հավատքի ուղղափառության քննությունը: Վարդապետների արժանավորության մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսի առջև վկայեցին Հայ Եկեղեցու ներկայացուցիչներ Հայաստանից, Ֆրանսիայից, Հունաստանից, Արգենտինայից՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաև հավատավոր ժողովուրդը ներկայացնող աշխարհականներ, որից հետո սուրբ պատարագը շարունակվեց Մայր տաճարի Ավագ Խորանին:

Վեհափառ Հայրապետին որպես առընթերականեր սպասավորում էին Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը: Ընծայացուների խարտավիլակն էր ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպս. Պարսամյանը:

Պատարագի սրբազան արարողության ընթացքում «Աստվածային և երկնային շնորհ» շարականի երգեցողության ներքո վարդապետները, ծնկի եկած վեր բարձրացնելով իրենց ձեռքերը, հերթական անգամ հրաժարվեցին աշխարհական կյանքից՝ վերստին ուխտելով իրենց անձերն ընծայաբերելու Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորությանը: Այնուհետև Մայր Աթոռի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանը հանդիսավոր թափորով Սուրբ Խորան բարձրացրեց սրբալույս մյուռոնը, որով Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եպիսկոպոսության կոչելով Առեն, Գրիգոր, Նարեկ, Մակար, Պարթև և Խորեն վարդապետներին, օծեց նրանց ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները: ➥ էջ 4

Եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

➥ էջ 3

Արարողության ավարտին նորաօծ եպիսկոպոսներին հանձնվեցին նաև իրենց եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գավազան ու մատանի:

Հիշարժան այս օրվա առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական պատգամն ուղղեց նորաօծ եպիսկոպոսներին և հավատավոր ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը փառք և գոհություն մատուցեց ամենակարող Աստծուն, որ Միածնաէջ Մայր տաճարի վերաօծման և սրբալույս մյուռոնի օրհնության հոգենորոգ արարողություններից հետո բարեպատեհ առիթն ընձեռվեց եպիսկոպոսաց դասը համալրելու նորաօծ սրբազաններով, որոնք տարիների ծառայության գովելի վաստակ ունեն ազգային-եկեղեցական անդաստանում:

«Քրիստոսի Եկեղեցին նորընծա եպիսկոպոսներով միշտ զորանում է, քանզի նրանց նվիրյալ ծառայությունը շինություն ու պայծառություն է հավելում եկեղեցական կյանքին, օրհնություն և մխիթարություն պարգևում հավատացյալներին՝ առաջնորդելով երկնային վարձատրության արժանի բարի գործերի: Ուստի այս իրադարձությունը նշանակալի է ոչ միայն նորոգ ձեռնադրյալների, այլև հավատացելոց համար, ինչպես եռամեծ վարդապետ Սուրբ Գրիգոր Տաթևացին է հաստատում, եկեղեցին Աստծո քաղաքն է, որին խնամք տանելու է կոչված եպիսկոպոսը: Ծանր է բեռը եպիսկոպոսի, դժվարին է ու պատասխանատու նրա առաքելությունը: Եպիսկոպոսի բարձր հանգամանքը ոչ թե փառքի դափնիներով զարդարուն կյանք է ենթադրում, այլ խոնարհ և ժուժկալ սպասավորություն, հաճախ նաև անձնազոհություն՝ մեր Տիրոջ նմանությամբ»,— ընդգծեց Նորին Սրբությունը՝ հավելելով, որ եպիսկոպոսը հայր է, որը կոչված է սիրով և ջանադրությամբ հոգատարելու իր հոգևոր զավակներին, Ավետարանի անհոգնաբեկ քարոզչությամբ

արթուն ու զորեղ պահելու նրանց հավատքն ու աստվածսիրությունը, խարսխելու նրանց կյանքը հոգևոր արժեքների վրա, ինչպես և նախազգուշացնելու վտանգների մասին ու զերծ պահելու մեղսալի և կործանարար ընթացքներից:

Ամենայն Հայոց Հայրապետը, անդրադառնալով եպիսկոպոսի առաքելությանը, ի մասնավորի ասաց. «Եպիսկոպոսը տեսուչ է՝ կոչված նախանձախնդրորեն հետևելու ուղղափառ հավատի անաղարտ պահպանությանը, մեր Սուրբ Եկեղեցու կարգաց և կանոնաց հարգմանը, իր շնորհներն ու կարողությունները ծառայեցնելու տերունապատվեր հոգեփրկչական առաքելությանը, հսկելու և կարգավորելու իր իշխանության ներքո գործող եկեղեցականների ծառայությունը, օծելու եկեղեցիներ, ձեռնադրելու հոգևոր նոր սպասավորներ:

Եպիսկոպոսն առաջնորդ է, որի անդրանիկ պարտականությունն է Կենաց Խոսքի ուսուցմամբ քրիստոսապատվեր շավիղներով առաջնորդել հավատացյալներին, նաև փորձություններով լեցուն այս աշխարհում խիզախաբար պայքարել իր հավատավոր հոտի իրավունքների համար:

....Եպիսկոպոսը սպասավոր է, սիրելիներ, կոչված միշտ ականջալուր և խնամարկու լինելու հավատացելոց հոգևոր կարիքներին ու պետքերին»:

Հայոց Հովվապետը հաստատեց նաև, որ մեր պատմությունը հարուստ է բազում վկայություններով, թե ինչպես են եպիսկոպոսները հայոց հայրապետների գլխավորությամբ անձնդիր գործել ազգի հոգևոր խնամքի և փրկության, հայորդյաց սրտերում հավատքի, հայրենասիրության ու ազգանվիրումի զորացման, հայրենիքի և մեր ժողովրդի ապահով կյանքի, առաջընթացի ու բարօրության համար:

«Անշուշտ պատմական փոթորկալի զարգացումները, աշխարհաքաղաքական ծանր իրողությունները հաճախ մեր ազգին կանգնեցրել են երբեմն անհաղթահարելի և անդառնալի թվացող կորուստների և ծանր հիմնախնդիրների առջև, որոնցից անմասն չի եղել նաև Հայոց Եկեղեցին: Այսօր ևս մեր ժողովուրդն ու երկիրը գտնվում են լրջագույն մարտահրավերների հանդիման, հայրենական անդաստանում արդարությունն ու ճշմարտասիրությունը զորացնելու, համազգային միաբանությունը հաստատուն պահելու և անկախ պետականությունը անսասան պահպանելու անհրաժեշտության առջև»,— նշեց Վեհափառ Հայրապետը՝ մտահոգությամբ արձանագրելով, որ տիրող դժվարին իրադրությանը զուգընթաց տարատեսակ վնասակար գաղափարախոսությունների տարածմամբ հայ հասարակության մեջ փորձ է արվում նսեմացնելու մեր Սուրբ Եկեղեցու պատմական առաքելության և քրիստոնեական արժեքների կարևորությունը, ընտանիքի ավանդական ընկալումը, խարխլելու ազգային համերաշխության հիմքերը:

Այս առնչությամբ Նորին Սրբությունն ընդգծեց, որ նման տագնապալի պայմաններում հարկ է Տիրոջ օգնականությամբ բազմապատկել հոգևորականների և եկեղեցական կառույցների ջանքերը՝ ի նպաստ վիրավոր մեր հայրենիքի և ժողովրդի առջև ծառացած խնդիրների արժանապատիվ հաղթահարման, ազգային ոգու զորացման և ինքնության անխաթար պահպանման:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ներկայացնելով եպիսկոպոսության արժանացած եկեղեցականներին և անդրադառնալով նրանց տարիների եկեղեցանվեր ու ազգասեր ծառայությանը, պատգամեց, որ իբրև Աստծո հավատարիմ մշակներ լինեն քաջ ու հետևողական հավատի պաշտպանության մեջ, մշտարթուն հովվել ու խնամել Տիրոջ հոտը:

«Հայրական Մեր հորդորն է յուրաքանչյուրիդ՝ բոլորանվեր ծառայել մեր ժողովրդին՝ առաջնորդելով ապրելու աստվածադիր պատվիրաններով և հավատարիմ մեր երանյալ հայրերի ավանդներին, որպեսզի հոգևոր արժեքների պայծառությամբ ամուր և աներեր մնա մեր ժողովրդի հավատը, որով պիտի և իրականություն դարձնենք մեր ազգի իղձերն ու երազները: Ձեր գործերում և վճիռներում միշտ առաջնորդվեք Քրիստոսի օրինակով և ձեր ընթացքով բարի օրինակ ծառայեք հավատացելոց համար՝ հիշելով, որ Աստված է գործում ձեր մեջ և ձեր միջոցով: Ուստի աննկուն և հաստատակամ մնացեք՝ մեր զավակաց կյանքում հավատքի, հույսի և սիրո առատացման պարտականության մեջ: Առ Տերն ապավինությամբ արդյունավորեք առաջնորդական ձեր գործունեությունը՝ ի բարգավաճում տիրախնամ թեմերի, ի պայծառացում և ի զորացում հայրենիքի և ազգային-եկեղեցական կյանքի»,— ընդգծեց Հայոց Հայրապետը՝ աղոթք առաքելով առ Աստված, որ խաղաղություն շնորհի ողջ աշխարհին ու մեր հայրենիքին և Իր Սուրբ Աջի հովանու ներքո անվտանգության ու բարօրության մեջ պահի համայն հայ ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս:

Ապա «Ողջույնի» ժամանակ ներկա եկեղեցականները բարձրացան Սուրբ Խորան և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ շնորհավորեցին նորաօծներին՝ համբուրելով նրանց մյուռոնադրոշմ աջը:

Սուրբ պատարագի ավարտին նորաօծ սրբազաններին եպիսկոպոսության կանչվելու առիթով շնորհավորեց նաև հավատավոր ժողովուրդը:

Առաջիկա շաբաթվա բոլոր օրերին նորաօծ եպիսկոպոսները Մայր տաճարում կմատուցեն ուխտի պատարագներ:

Հայրապետական մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Նոյեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 25-րդ տարեդարձի առիթով սուրբ պատարագի ավարտին կատարվեց Հայրապետական մաղթանք:

Սրբազան արարողություններին ներկա էին Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը, Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ և բարեպաշտ հայորդիներ:

Մայր տաճարում ուխտի սուրբ պատարագ մատուցեց նոյմեբերի 3-ին եպիսկոպոսական ձեռնադրության և օծման արժանացած՝ Արգենտինայի և Չիլիի հայոց թեմի առաջնորդ Տ. Առեն եպս. Շահենյանը:

Պատարագիչ սրբազանն իր քարոզում շնորհավորեց Հայոց Հովվապետին օծման ու գահակալության տարեդարձի կապակցությամբ և անդրադարձավ Վեհափառ Հայրապետի հոգևոր, մշակութային, կրթական ու եկեղեցաշեն գործունեությանը՝ ի մասնավորի նշելով. «Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, 25 տարի առաջ բարեգութ Աստված հայոց ազգին ցույց տվեց Իր սերը և Իր հոգատարությունը՝ առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցուն տալով բարի, իմաստուն և քաջ հովիվ, որը կարողացավ մեր ազգի համար դժվարին, տագնապալի ու փոթորկալից ժամկներում անսասան պահել հայի ինքնության և փրկության տապան Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ դառնալով արժանի հաջորդը Սուրբ Թադեոս ու Սուրբ Բարդուղեմեոս առաքյալների և երկրորդ Լուսավորիչ Սուրբ Գրիգոր Հայրապետի»:

Առեն եպիսկոպոսը, դիմելով ներկաներին, հրավիրեց ամենքին իրենց սրտագին աղոթքներն ու բարեմաղթանքները միախառնել համայն հայության աղոթքներին՝ հայցելով, որ Տերը քաջառողջ, երկար տարիներ և արդյունաշատ գահակալություն պարգևի Վեհափառ Հորն ու անսասան պահի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ իր նվիրապետական աթոռներով:

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետի օծման և գահակալության 25-րդ տարեդարձի առիթով կատարվեց Հայրապետական մաղթանք՝ հանդիսապետությամբ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանի:

Մայր Աթոռում տեղի ունեցավ շքանշանի հանձնման արարողություն

Նոյեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն:

Արարողությանը ներկա էր Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը:

Հայրենանվեր, եկեղեցասեր ու ազգաշահ իրագործումների համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձր շքանշանի արժանացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարներ տեր և տիկին՝ Աշոտ և Լորա Թունյանները:



Արարողությունը բացվեց Տերունական աղոթքով, ապա ներկաներին ողջունեց Մայր Աթոռի դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Պարույր ավ. քհն. Ավետիսյանը:

Մեծարյալների կյանքին, վաստակին ու գործունեությանն անդրադարձավ տիար Վարդան Օսկանյանը, ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին հայրապետական սրբատառ կոնդակը և շքանշանները:

Այնուհետև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանն ընթերցեց հայրապետական սրբատառ կոնդակը, որում ի մասնավորի ասվում է. «Այսօր առիթն ունենք բարձրորեն գնահատելու ազգային-եկեղեցական մեր կյանքում Ձեր գովելի վաստակը: Տարիներ շարունակ Դուք տարբեր հանձնառություններով աջակից եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ համայն հայության հոգևոր կենտրոնի տիրավանդ առաքելության մեջ: Հատկապես գովարժան է պատվարժան հայորդուդ վաստակը Մյանմայում Հայ Եկեղեցու իրավունքների պաշտպանության գործում:

....Առանձնակի գոհունակություն է Հայրապետիս համար անդրադառնալ, որ Դուք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ընծայաբերեցիք արևային և ջրատաքացուցիչ կայաններ և հոգացիք իրականացնել դրանց տեղադրման աշխատանքները՝ կարևոր ծառայություն մատուցելով մեր Սուրբ Եկեղեցուն»:

Սրբատառ կոնդակի ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը Հայ Եկեղեցու շքանշանով զարդարեց մեծարյալների կուրծքը:

Ապա երախտագիտության խոսք ասաց տիար Աշոտ Թունյանը՝ ընդգծելով, որ Հայ Եկեղեցու բարձրագույն պարգևն ընդունում է իբրև գնահատանք այն համեստ ծառայության, որը հանձն է առել իր ընտանիքը՝ ի նպաստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության: Տիար Թունյանը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ շարունակելու է իր զորակցությունը բերել հայրենիքին և Եկեղեցուն:

Հանդիսությունն ամփոփվեց Նորին Սրբության օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը վերստին անդրադարձավ Աշոտ Թունյանի հայրենասեր և եկեղեցանվեր ոգուն, ինչպես նաև Մայր Աթոռի նկատմամբ մշտական հոգածու վերաբերմունքին:

Իր շնորհավորանքներն ու մաղթանքները բերելով տեր և տիկին Թունյան ամուլին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց, որ Աստված Իր օրհնության ներքո պահի Թունյան ընտանիքին՝ հաջողություններ պարգևելով նրանց բարի գործերին ու նախաձեռնություններին:

Համահայկական աղոթք գերիների համար

Նոյեմբերի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Հայաստանի և Սփյուռքի թեմերի բոլոր եկեղեցիներում հընթացս սուրբ պատարագի կատարվեց համահայկական աղոթք արցախահայերի իրավունքների պաշտպանության՝ մասնավորապես Ադրբեջանի կողմից առևանգված, գերեվարված և Բաքվում շինծու մեղադրանքներով ապօրինաբար պահվող զինծառայողների, քաղաքացիական անձանց և Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչների համար: Ամենայն Հայոց Հայրապետի կոչին ընդառաջ՝ եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ) և Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսը (ԵԵԿ) հորդորել են իրենց անդամ եկեղեցիներին ու բարի կամքի տեր բոլոր մարդկանց նոյեմբերի 10-ին միանալու Հայաստանին և արցախահայությանը նվիրված աղոթքի օրվան:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ընծայաբերվեց Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի մասունքը

Նոյեմբերի 10-ին՝ Միածնաէջ Մայր տաճարում մատուցված սուրբ և անմահ պատարագի ավարտին, հյուրաբար Սուրբ Էջմիածին ժամանած Պրահայի արքեպիսկոպոս Յան Գրաուբները Մայր Աթոռին ընծայաբերեց հայոց առաջին լուսավորիչ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնադիր Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի մասունքը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբի մասունքով օրհնեց ներկաներին՝ հայցելով Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի բարեխոսությունը մեր հայրենիքի խաղաղության, հայ ժողովրդի բարօրության և Եկեղեցու պայծառության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնել է Հնդկաստան

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոյեմբերի 11-ին հայրապետական այցով մեկնել է Հնդկաստան՝ Կալկաթայի եկեղեցական վարչության և Հայոց մարդասիրական ճեմարանի տնօրինության հրավերով: Նորին Սրբության հետ մեկնել են նաև գավազանակիրը և տեղի հայկական եկեղեցու կարիքներին օգտակարություն բերելու նպատակով ասեղնագործության և որմնանկարների վերականգնման մասնագետներ:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոհերից

Հայրապետական գահակալության 25-ամյակի առիթով



➤ Քրիստոսի փրկագործությունը օրինակ է համամարդկային և ազգային բարիքի հաստատման մեջ տեսնելու սեփական առաքելությունը և միասնության մեջ կերտելու երջանկության, առաջընթացի, ձեռքբերումների ուղիները: Այսպես կյանքը ինքնանպատակ լինելուց դառնում է նվիրում, աշխատանքը՝ արարում, գիտությունը, տաղանդը՝ համընդհանուր բարիք, իշխանությունը՝ ծառայություն ժողովրդին, իսկ մարդու երկրավոր, անցողիկ կեցությունը՝ բաղձանք ու ձգտում դեպի հավիտենություն:

➤ Քրիստոսասեր մեր ժողովուրդը հոգու անպարտելիությամբ է հարատևել, քանզի մարմինը կարող է և պարտվել, բայց ոչ ոք չի կարող պարտության մատնել հավատավոր հոգին:

➤ Պետականությունը ազգի կազմակերպման հիմքն է, առաջընթացի ուղին, իր արժեքներով ապրելու, իր հոգևոր ներուժը դրսևորելու հենարան, իր ձգտումները իրագործելու և իրավունքները պաշտպանելու պատվար ու ազգի հարատևության գրավական:

➤ Հայրենիքը մեր հույսերի խարիսխն է, ազատ, ապահով, բարեշեն կյանքի, մեր գալիքի երաշխիքն է, ազգս համախմբող աստվածապարգև մեր տունը:

➤ Արդի դարը, որ բնորոշվում է ավելի նյութապաշտությամբ ու աշխարհիկությամբ, առավել կարիքն ունի հոգևոր ներուժի, աներկմիտ հավատքի, դարձի՝ դեպի Քրիստոսապատվեր հոգևոր-բարոյական արժեքները, որոնցով իմաստավորվում է կյանքը և հաստատվում իր նպատակի՝ դեպի Աստված ընթացքի մեջ:

➤ Աստուծո և միմյանց հանդեպ սերն է, որ խաղաղություն և համերաշխություն պիտի բերի բազում տագնապներով ապրող այս աշխարհին, բացառի մարդկանց, ազգերի իրավունքների ոտնահարումը, նրանց սրբությունների և հոգևոր արժեքների կործանումը: Այդպիսի սիրով պիտի հաղթահարվեն չքավորությունը, հիվանդությունները, աղետների պատճառած հոգսերն ու վնասները: Այդպիսի սիրո լույսով աշխարհը պիտի նորոգվի, երկիրը երկինք դառնա, մարդկային կյանքով Աստված փառաբանվի:

➤ Հավատը պետք է ապրելու համար: Հավատը շնորհ է աստվածային՝ ի վերուստ մարդու հոգու մեջ բնակեցված: Հավատով է լինում ամեն ինչ, և առանց հավատի չի լինի ոչինչ:

➤ Մեր ամեն խոսք և գործ կամ վաճառում է ճշմարտությունը, կամ հաստատում այն: Կամ խոցում է դիմացինի սիրտը, կամ ամոքում ու մխիթարում, կամ ավերում է, կամ կառուցում, կամ խավար է ծնում, կամ լույս: Ով ճանաչել է Ճշմարտությունը, խավարը չի ցանկա: Ով քայլել է ճշմարտության ճանապարհով, խավարում չի դեգերի:

➤ Դարն իր բոլոր պատերազմներով, կորուստներով ու ավերածություններով, ներկա կյանքի բոլոր անարդարություններով դառնություն է կուտակել մեր ժողովրդի հոգու մեջ, դառնացած է անհատը իր իսկ դեմ, դառնացած է ընկերոջ դեմ, բարեկամի, ծնողի, ազգի դեմ, աշխարհի դեմ: Հայոց հոգում այսօր կուտակված է դառնություն, իրավ, բայց բնավ խեղճությունից չէ ու անզոր թուլությունից: Պարզապես ներքին մի ընդվզում կա, որի պատճառները և՛ մեր ազգային կյանքում են, և՛ միջազգային հանրության դրսևորած կեցվածքի արտահայտություն են: Այդ դառնությունից պիտի կարողանանք, անշուշտ, ձերբազատվել և մեր հոգու խաղաղությունը գտնել: Աստծո ապավինությունն ու ներկայությունը մեր հոգում՝ մենք հաշտություն պիտի գտնենք մեր մեջ՝ մեր անձի հետ, մեր ընկերոջ, բարեկամի, Աստծո հետ, մարդկանց ու աշխարհի:

➤ Հավատով ու սիրով զոդված միասնությունից են ծնունդ առել մեր բոլոր հաղթանակները:

➤ Ամենամեծ վտանգը, որ կարող է սպառնալ ազգին և հասարակությանը, բարոյական ուժերի կորուստն է:

➤ Երիտասարդ սերնդի ազգային ոգով կրթությունը և հայրենի սրբազան արժեքներով դաստիարակությունն է գրավականը մեր ժողովրդի գոյության հարատևության:

➤ Ընտանիքը կոչված է շարունակելու Աստուծո արարչագործությունը և պաշտպանելու մարդկային հոգու աստվածապատկեր նկարագիրը: Ընտանիքներում սերմանվող արժեքներն են, որ դրսևորվում և տեղ են գտնում կյանքի մեջ: Ինչը կկարևորվի ընտանիքներում, կուսուցանվի ուղղակի կամ անուղղակի միջոցներով՝ ազնվություն, թե կեղծիք, նախանձ, թե բարի կամեցողություն, ատելություն, թե գթասրտություն, չարախնդություն, արհամարհանք, թե կարեկցություն ու մարդասիրություն, ամենը կարտահայտվի նաև մարդկային կյանքում:

➤ Երևանը մեր ժողովրդի սիրտն է, որ արյուն է մատակարարում՝ պայմանավորելով նրա գոյությունը և լինելությունը: Երևանը ուժ է, զորություն է, ոգի է: Կցանկանայի, որ ամբողջ Հայաստանը հոգևոր կենտրոն դառնար:

➤ Անփոխարինելի է Էջմիածինը, մեր ժողովրդի սրբություն սրբոցն է: Էջմիածնից բացակայելիս վայրկյան առաջ ուզում եմ վերադառնալ: Դա ուրիշ ապրում է, ուրիշ զգացում: Հոգուդ մեջ Աստված է բարձրանում ամեն անգամ, երբ մտնում ես Էջմիածին:

➤ Թերևս հոգեբանության պակասն է մեզ վնասում, հոգեբանությունն է մթնոլորտ ձևավորում: Ես չեմ կարծում, որ միջոցները այս աստիճան մեծ դերակատարություն ունեն: Ընդհանուր հոգեբանություն է ձևավորվել, մտայնություն, որից պիտի ձերբազատվենք և զարկ տանք ոգուն, կամքին, արիությանը՝ վերանորոգելու մշակութային կյանքը: Այսօր ես ընդհանուր ծուլություն ու թմրություն եմ տեսնում, անտարբերություն. տքնելու, ոչնչից ինչ ստեղծելու կամքը բացակայում է:

➤ Պետք չէ սպասել: Պետք է ապրել կյանքը: Պետք է նախաձեռնող լինել, դեռ երբեք անտարբերությունը հեռանկար չի ծնել: Մենք ամեն ինչ կապում ենք միջոցների, վիճակի հետ, բայց մենք պիտի տերը լինենք, մենք պիտի վիճակները ուղղորդենք, թելադրողը մենք պիտի լինենք: Երբ տեր ու իշխան ենք, այդ ժամանակ է գործն առաջ շարժվում:

Նյութի հիմնական աղբյուրը՝ «Հատընտիր պաշտոնականք», հտ. Բ, Ս. Էջմիածին, 2019

Գնդերեցի առաքելությունը

Հարցազրույց ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանի հետ

— Հայր սուրբ, քրիստոնեական ճիշտ դաստիարակությունը կարևորագույն դեր ունի զինվորի բարոյահոգեբանական բարձր պատրաստականության գործում: Ինչ խնդիրներ է լուծում Հայ Առաքելական Եկեղեցու գնդերեցը Հայոց բանակում և պատերազմի դաշտում:

— Զինծառայողների հոգևոր դաստիարակության կարևորության գիտակցումով, նրանց հոգևոր կարիքները հոգալու և քրիստոնեական-բարոյական սկզբունքներով դաստիարակելու նպատակով 1997 թ. նոյեմբերի 13-ին երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի և ՀՀ պաշտպանության նախարար լուսահոգի Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ ստեղծվեց ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդությունը, որի առաքելությունն է զինծառայողներին հաղորդակից դարձնել Սուրբ Գրքի ու քրիստոնեական հավատքի սկզբունքներին՝ համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանանքի, ինչպես նաև զինծառայողներին դաստիարակել քրիստոնեական-բարոյական սկզբունքներով և ազգային-հայրենասիրական ոգով:

Մոտ 27 տարի է, ինչ ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդությունն իր հոգեխնամ առաքելությունն է իրականացնում ՀՀ զինված ուժերում: Անցնող տարիների ընթացքում Հոգևոր առաջնորդությունը կատարելագործվել է՝ շարունակական վերապատրաստումների, նոր ծրագրերի և մեթոդների կիրառմամբ, և այսօր գնդերեցները, գործադրելով ձեռքբերված գիտելիքները և փորձը, իրենց օգտակարությունն են բերում ՀՀ զինված ուժերի զինծառայողներին:

Գնդերեցները նպաստում են զինծառայողների հոգևոր ու բարոյական դաստիարակությանը, քրիստոնեության տեսանկյունից ցույց են տալիս զինվորական ծառայության արժեքն ու վեհությունը՝ բարձրացնելով զինծառայողների կարգապահության մակարդակը և մարտական ոգին: Իրենց ամենօրյա գործունեությամբ գնդերեցները զինծառայողներին զերծ են պահում քայքայիչ գաղափարախոսություններից, փողոցային արատավոր բարքերից, վնասակար սովորություններից: Նրանք նպաստում են զինծառայողների ներքին խաղաղությանը, համերաշխությանը, հանդուրժողականությանը, փոխզորակցությանը, կարգապահությանը, մարտունակ ոգու կայացմանն ու պահպանմանը: Այս ամենին որպես հավելում՝ նրանք նաև նպատակ ունեն երկու տարվա ծառայությունից հետո հասարակություն ուղարկել մեկ այլ որակի երիտասարդների, որոնք գիտեն նվիրվել ու սիրել իրենց ազգն ու հայրենի պետությունը և ամբողջ կյանքում մնալ այդ սրբությունների պաշտպաններ: Զինված ուժերում հոգևոր ծառայության վերջնական նպատակը զինվորների մեջ հենց տվյալ որակների ամրագրումն է, իսկ այդ ճանապարհին, իհարկե, լուծվում են նաև կարգապահական հարցեր: Մի խոսքով, ՀՀ ԶՈՒ Հոգևոր առաջնորդությունը, սերտորեն համագործակցելով ԶՈՒ-ի այլ կառույցների հետ, նպաստում է բանակում քրիստոնեական արժեհամակարգի վրա հիմնված առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը:

— Դուք՝ որպես հոգևորական, երկար տարիներ ծառայել եք բանակում, մասնակցել եք Արցախյան 44-օրյա պատերազմին: Հոգևոր ծառայություն էիք իրականացնում Հնդկաստանում՝ Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում, երբ պատերազմն սկսվեց, և 10-րդ օրը ռազմաճակատ մեկնեցիք: Ձեր ներկայությունը, անշուշտ, պատերազմի ընթացքում ոգի և վստահություն էր ներշնչում հայ զինվորներին ու սպաներին: Կներկայացնե՞ք այդ օրերից դրվագներ:

— Ես իմ որդիական խոնարհումն ու երախտագիտությունն եմ հայտնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին, որ ինձ արտոնեց այդ օրերին վերադառնալ Հնդկաստանից և հոգևոր ծառայություն իրականացնել Արցախում:

Քառասունչորսօրյա պատերազմի ընթացքում ականատես եմ եղել, որ գրեթե ամենուր զինվորները աղոթքի, օրհնության, խաչի, հոգևորականի ներկայության կարիք ունեին, չմկրտվածները խնդրում էին իրենց մկրտել: Որտեղ ներկա էր գնդերեցը, որտեղ կային հավատք ու աղոթք, այնտեղ կարգապահությունն ավելի բարձր մակարդակում էր:

— Հայր սուրբ, որո՞նք են մեր պարտությունների և կորուստների հիմնապատճառները:

— Սուրբ Գրքի շատ տեղերում հավատացյալների դեմ ծագող պատերազմների գլխավոր պատճառ համարվում են Աստծո առաջ նրանց ծանր մեղքերը և անհավատարմության դրսևորումները: Պատերազմը համարվում է հատուցում ժողովրդին՝ նրանց գործած բոլորի մեղքերի դիմաց: Հուդիթի գրքում նկարագրված է, թե ինչ է ասում Սուրբ Հոգին Հուդիթի միջոցով. *«Քանի դեռ նրանք իրենց Աստծու առջև չէին մեղանչել, նրանց հետ էր բարիքը, որովհետև Աստուած, որ ատում է անիրաւութիւնը, նրանց հետ էր: Եւ երբ իրենք հեռացան Աստծու պատուիրած ճանապարհից, կոտորուեցին բազմաթիւ պատերազմների մէջ եւ գերուեցին օտար երկիր, որ իրենցը չէր: Իրենց Աստծու տաճարը կործանուեց, ու իրենց քաղաքները մատնուեցին իրենց թշնամիների ձեռքը» (Հուդիթ Ե 21–22):*

— Վասն հայրենյաց գիտակցական մահվան գնալն անմահության ճանապարհ է: Հավիտենական կյանքի խորհրդաբանությունը մխիթարությո՞ւն է, թե՞ իրականություն: Կմեկնաբանե՞ք նահատակների անմահության քրիստոնեական պատգամի իսկությունը:

— Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, որ նյութական աշխարհից զատ՝ կա աննյութական, հավիտենական աշխարհ, մարդն իր մարմնով մաս է կազմում նյութական աշխարհի, իսկ հոգին պատկանում է աննյութականին, հետևապես՝ քրիստոնյայի համար հավիտենական կյանքի գաղափարը իրականություն է: ➥ էջ 7

Գնդերեցի առաքելությունը

↩ էջ 6

Աստվածաշնչի մեջ՝ Մակաբայեցիների գրքում, հայրենիքի համար նահատակվածների մահը կոչվում է «գեղեցիկ» և ասվում, որ նրանք փրկության կարժանանան. *«Սթափ մտածելով՝ նա չորս սատեր արծաթ հավաքեց և տվեց, որ տանեն, Երուսաղեմում զոհեր մատուցեն կատարված մեղքերի համար: Դա խիստ իմաստուն քայլ էր, որովհետև ինչ որ անում էր, մեռելների հարության մասին մտահոգվելով էր անում: Եթե պատերազմում ընկածների հարության ակնկալություն չունենար, զուր կը լիներ մեռելների համար աղոթք մատուցելը: Նա ճիշտ էր հասկացել, որ գեղեցիկ մահով ընկածները շնորհների են արժանանում: Նա հավատում էր, որ քաջությամբ ընկածները մեղքերի թողություն կը ստանան» (Բ Մակաբայեցիներ, 12.39–46):*

Ըստ պատմիչ Փավստոս Բուզանդի՝ երբ Սուրբ Վրթանես Ա Հայրապետի (333–341 թթ.) օրոք՝ հայոց և պարսից միջև տեղի ունեցած պատերազմի ժամանակ, զոհվում է հայոց նշանավոր սպարապետ Վաչե Մամիկոնյանը, Սուրբ Վրթանես Հայրապետը մխիթարում է ժողովրդին այդ մեծ կորստի համար՝ ասելով. *«Մխիթարվեցե՛ք Քրիստոսով, որովհետև նրանք որ մեռան, մեր աշխարհի, եկեղեցիների, աստվածատուր հավատի համար մեռան»,* ուստի Հայոց Հայրապետը սահմանում է, որ նրանց հիշատակն ամեն տարի տոնվի, և նրանց անունները հիշվեն սուրբ պատարագի ընթացքում: Նա նաև ավելացնում է, որ նրանց հետ պետք է հիշվեն նաև բոլոր նրանք, ովքեր կզոհվեն հայրենիքի փրկության համար:

— Հա՛յր Մովսես, ժամանակակից ռազմատեխնիկական նվաճումների պայմաններում որքա՞ն են կարևոր կամ վճռորոշ զինվորականի մարտական ոգին և բարոյական բարձր արժեհամակարգը:

— Չնայած թշնամուն ոչնչացնելու ժամանակակից զենքերին ու միջոցներին՝ պատերազմի և ռազմական գործողությունների ամենակարևոր տարրը միշտ կլինի անձը, և մարտի հաջողությունը մեծապես կախված կլինի նրա հոգեվիճակից: Ուստի անհրաժեշտ է զորքերի կրթության ու պատրաստության գործում հատուկ ուշադրություն դարձնել հոգևոր դաստիարակության գործոնին, որն իր լուրջ ազդեցությունն ունի զինվորի բարոյահոգեբանական նկարագիրը ձևավորող բոլոր հիմնարար որակների ու տարբեր իրավիճակներում ցուցաբերվող վարքագծի ձևավորման վրա:

Հետևաբար՝ բանակը ոչ միայն ռազմական մասնագիտության և ֆիզիկական պատրաստության դպրոց է, այլև հայրենասիրության վրա հիմնված հոգևոր-բարոյական վսեմ որակների կրթման համակարգ, ինչն անհնար է առանց Սուրբ Եկեղեցու մասնակցության: Որքան էլ հրամանատարներն իրենց ենթակա անձնակազմի պատրաստման գործում լինեն ջանասեր ու փորձառու, միևնույն է, զինծառայողներին քրիստոնեական առաքինություններով, բարոյական արժեհամակարգով օժտելու համար անհրաժեշտ է հոգևոր դաստիարակություն, քրիստոնեական հավատի քարոզչություն, որոնք և կատարում են մեր հոգևորականները:

— Հայ զինվորականի կերպարի ի՞նչ հատկություններ կառանձնացնեք Ձեր համատեղ գործունեության արդյունքում:

— Քրիստոնյա զինծառայողի համար զինվորական պարտքի կատարումը Սուրբ Գրքում ներկայացվում է որպես Աստծո և մերձավորի նկատմամբ սիրո մասին Տեր Հիսուս Քրիստոսի պատվիրանի կատարում (Մատթ. 22:37–38, Մարկոս 12:30, Ղուկաս 10:27): Առանց այս քրիստոնեական սիրո՝ անհնար է անձնվիրաբար կրել զինվորական ծառայության դժվարություններն ու վտանգները, որը հիմնված է Տիրոջ պատվիրանի վրա, *«Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար»* (Հովհ. 15:13): Սա սիրո, քաջության ու անձնազոհության այն մեծագույն ուղին է, որ ընտրում են ՀՀ ԶՈՒ նվիրյալ սպաներն ու զինվորները և զինվորական երդումով վկայում հանուն հայրենիքի կյանքն անգամ չխնայելու պատրաստակամությունը: Այդ սերն է, որ անձին ուղղորդում է բարոյական սխրանքների, որոնք ուղեկցվում են հերոսական արարքներով:

Զինվորականի կերպարի մեջ խտացված են քրիստոնեական շատ առաքինություններ՝ քաջություն, անձնազոհություն, խոնարհություն, ընկերասիրություն, ծառայասիրություն, կարգապահություն և այլն: Զինվորական այս հատկանիշների շնորհիվ զինծառայողը համարվում է ճշմարիտ քրիստոնյայի կերպար:

— Ընդհանրացնելով Ձեր խոսքը՝ զինվորականի ինչպիսի՞ գաղափարատիպի վերադաստիարակությանն է միտված հայ հոգևորականի սպասավորությունը Զինված ուժերում:

— Առհասարակ, բանակի մարտունակության մասին կարող ենք դատել՝ գնահատելով զինծառայողների մարտական ոգին, որն ընդհանուր արդյունքն է այն բոլոր բարոյական հատկությունների, որոնք դրսևորվում են զինվորական ծառայության ժամանակ, ինչպիսիք են՝ *հավատարմությունը, պարտքի գիտակցումը, անձնվիրությունը, պատիվը, հավատքը, ազնվությունն ու քաջությունը:* Հավատքի շնորհիվ այս արժեքներով ապրելը պետք է զինվորների համար դառնա կենսակերպ, որպեսզի զինվորն ունենա ծառայողական պարտականությունների նկատմամբ բարեխիղճ վերաբերմունք և ոչ թե պատժի, այլ գիտակից նվիրումի վրա հիմնված կարգապահություն, ինչպես նաև հոգատարություն ծառայակից ընկերների նկատմամբ, նրանց համար հարկ եղած դեպքում իր կյանքը վտանգի ենթարկելու պատրաստակամություն:

— Հա՛յր Մովսես, պատերազմից հետո Դուք գիրք եք հեղինակել՝ «Արդարացի պատերազմի տեսությունը»՝ արժանանալով վարդապետական աստիճանի: Հայ ժողովուրդն իր գոյության ընթացքում մշտապես արդարացի պատերազմ է մղել թշնամիների դեմ՝ քանակապես փոքրանալով և հայենիքի տարածական կորուստներով: Ե՞րբ ակնկալենք Տիրոջ արդարադատությունը: Արդարացի պատերազմի սուրբգրային տեսության բացահայտումներ կանե՞ք ընթերցողների համար:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառը դիրքերում օրհնում է հայ զինվորներին

— Թե՛ Սուրբ Գրքում և թե՛ Եկեղեցու սուրբ հայրերի ու պատմիչների գրվածքներում բազմաթիվ են վկայությունները, որ եթե ժողովուրդը հավատարիմ է Աստծուն, և նրա դեմ դուրս են եկել թշնամիները, ապա այդ դեպքում Աստված միշտ օգնում է հաղթանակ տանել՝ չնայած թշնամու քանակային առավելությանը:

Ղևտացիների գրքում նկարագրված է Աստծո խոստումը ժողովրդին, որ եթե ըստ Տիրոջ հրամանի ընթանան, Աստծու պատվիրանները պահեն ու կատարեն, ապա Տերն իրենց երկրին խաղաղություն կպարգևի, և այնտեղ պատերազմ չի լինի. *«Դուք հալածական կ՚անէք ձեր թշնամիներին, եւ նրանք սպանուած կ՚ընկնեն ձեր առաջ: Ձեր հինգ հոգին հալածական կ՚անի հարիւր հոգու, իսկ ձեր հարիւրը՝ բիւրաւորների, ձեր թշնամիները սրի հարուածներից կ՚ընկնեն ձեր առաջ»* (Ղևտ. ԻԶ 3–8): Նույնպես և Զաքարիա մարգարեն արդար պատերազմում հավատացյալ ռազմիկների մասին ասում է, որ նրանք պիտի լինեն այնպիսի պատերազմողներ, որոնք պատերազմում, ճակատամարտի մեջ ոտնակոխ պիտի անեն թշնամիներին այնպես, ինչպես տրորում են ճանապարհի կավը, որովհետև Տերը նրանց հետ է (Զաք. Ժ 5):

Սուրբ Գրքի մեջ հաղթանակի գրավական են համարվում հավատքն ու աղոթքը, որովհետև, ինչպես գրված է Մակաբայեցիների գրքում, հաղթանակը ձեռք է բերվում ոչ թե շատ զորքով, այլ այն զորությամբ, որ երկնքից է գալիս (Ա Մակ. Գ 19):

— Շնորհակալություն հարցազրույցի համար, հա՛յր սուրբ...

Հարցազրույցը՝ Նարինե Հովհաննիսյանի

Տ. Մովսես վրդ. Սարգսյանը, Տ. Վարազդատ քհն. Նաջարյանը, Էդգար սրկ. Օհանյանը 2020 թ. պատերազմի ժամանակ

Տ. Տաթև եպս. Հակոբյանը, Տ. Մովսես վրդ. Սարգսյանը, Կարո սրկ. Դարիբյանը, Էդգար սրկ. Օհանյանը 2020 թ. պատերազմի օրերին

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ

Քրիստոսի դիմապատկերը նկարչական արվեստում

Քրիստոսի դիմանկարն ստանալու հիմքերն ունեն զուտ լեգենդային բացատրություններ, ու թեև դրանք գիտական ուսումնասիրության չեն ենթարկվել, բայց շարունակել են ոգեշնչել բոլոր ժամանակների արվեստագետներին: Բազմաթիվ խճանկարներին, քանդակներին, նկարներին ու գրաֆիտիներին 20-րդ դարում միանում են ֆիլմերը, որոնք նույնպես ստեղծում են Հիսուսի պատկերները: Զարմանալի է, թե որքան են փոխվել Հիսուսի պատկերները և որքան պահպանել լեգենդային հիշողությունները: Այս առումով շատ հետաքրքիր է Սուրբ Վերոնիկայի ու նրա թաշկինակի մասին կաթոլիկ ավանդությունը, ըստ որի՝ Վերոնիկան հենց այն կինն էր, որը, հուզված լինելով Հիսուսի տանջանքներից, մոտեցավ Նրան այն պահին, երբ Հիսուսն Իր խաչն էր կրում դեպի Գողգոթա, տվեց Նրան իր թաշկինակը՝ հոնքից քրտինքն ու արյունը սրբելու համար, որից հետո Հիսուսը վերադարձրեց այդ թաշկինակը՝ վրան Իր դիմապատկերը դրոշմված: Ենթադրվում է, որ Վերոնիկան կտորը ծալել է երեքտակ, և Քրիստոսի արյունը ներծծվել է բոլոր երեք շերտերը: 1721 թ. Հռոմից այն տեղափոխվել է Վիեննա: Մասամբ ծածկված է ոսկեզօծ պղնձե փայլաթիթեղով, որի ձևը համապատասխանում է դեմքի պատկերի ուրվագծին: Սև փայտի շրջանակը, հավանաբար, պատրաստվել է Հռոմում 1617 թ., իսկ արծաթե շրջանակն ավելացվել է Վիեննայում 1721 թվականին՝ վնասված պղնձի փոխարեն:

Սրբագործ մասունք է ընդունվել նաև «Քրիստոսի անձեռակերտ դիմանկարը», որը հայտնի է «Տիրոջ Դաստառակ», «Փրկչի կենդանագիր պատկեր», «Սուրբ Մանդիլիոն» և այլ անուններով: Վերջինս պահվում է Իտալիայում՝ Ջենովայի Սուրբ Բարդուղիմեոս հայկական եկեղեցում: Ենթադրվում է, որ դա Հիսուսի ամենահին պատկերն է: Ըստ քրիստոնեական ավանդության՝ Եդեսիայի Աբգար թագավորը, որը հավատում էր Քրիստոսին և հիվանդ էր, կամենում է գնալ Երուսաղեմ՝ անձամբ տեսնելու Աստծո Որդուն և բուժվելու: Համաձայն պատմական աղբյուրների՝ Աբգարը հայոց թագավոր էր և քաղաքական նկատառումներով էր իր արքունիքը տեղափոխել Եդեսիա: Խորենացին վկայում է, որ ելնելով քաղաքական պատճառներից՝ հետագայում Աբգարը հրաժարվում է այդ մտքից և իր բանբերների միջոցով՝ Անանի գլխավորությամբ, նամակ-խնդրագիր է ուղարկում Երուսաղեմ՝ խնդրելով Փրկչին, որ Նա գա և բժշկի իրեն, որովհետև, ինչպես Խորենացին է գրում, «նրա մարմինն ապականված էր չարաչար ցավերով»՝ բորոտությամբ: Աբգարն արժանանում է Փրկչի պատասխանին՝ գրված Թովմաս առաքյալի ձեռքով. «Երանի նրան, ով ինձ հավատում է, թեպետ տեսած չլինի, որովհետև իմ մասին այսպես է գրված, թե որոնք ինձ տեսնում են, ինձ չեն հավատում, իսկ որոնք չեն տեսնում, կհավատան և կյանք կգտնեն»: Քրիստոսը նաև հայտնում է, որ պետք է ավարտի առաքելությունն Իսրայելում, որից հետո կառաքի Իր աշակերտներից մեկին՝ բժշկելու Աբգարին: Լսելով Հիսուսի պատասխանը՝ Անանը մինչև հեռանալը փորձում է նկարել Փրկչին, բայց Հիսուսից ճառագող հզոր լույսը

Սուրբ Վերոնիկա



«Տիրոջ Դաստառակը»



Լեոնարդո դա Վինչի, «Սալվատոր Մունդի», 1490 թ.

Վարդգես Սուրենյանց, «Քրիստոսի դեմքը. Դաստառակ», 1900 թ., կտավ, յուղաներկ

Լեոնարդո դա Վինչի, «Խորհրդավոր ընթրիք», 1490 թ.

խանգարում է նրան, և Անանը չի կարողանում գծագրել Նրա դեմքը: Քրիստոսը, դա տեսնելով, լվանում է երեսը, դաստառակը հպում է դեմքին, և պատկերը տպվում է կտավի վրա: Դաստառակը հանձնելով Անանին՝ պատվիրում է այն հասցնել Եդեսիայի արքային: Ջենովայի Սուրբ Բարդուղիմեոս հայկական եկեղեցում պահվում է արծաթե տապանակը, որի շուրջբոլորը դրվագված պատկերներում ներկայացված է Դաստառակի պատմությունը: Իսկ տապանակում գտնվում է սրբապատկերը:

Լինելով Սուրբ մասունք՝ Դաստառակը ոգեշնչել է տարբեր նկարիչների, որոնք մեծ նշանակություն են տվել Անձեռակերտ կերպարին: Մի շարք նկարիչներ անդրադարձել են այս իրողությանը, այդ թվում՝ հայ մեծ նկարիչ Վարդգես Սուրենյանցը:

Վարդգես Սուրենյանցի «Դաստառակը» նկարված է իրականությանը շատ մոտ եղանակով. նկարիչն առանձնապես ընդգծել է Տիրոջ աչքերը, հոնքերը, քթի և շուրթերի հատվածները; Արվեստագետների գնահատմամբ՝ Հիսուսի դեմքը կատարյալ է. աչքերը, դիմագծերը խոսուն են, իրական, բայց միևնույն ժամանակ անհետացող են, միստիկական: Նրա պարզ հայացքը դիտողի հետ մտնում է երկխոսության մեջ: Նկարիչը ստեղծել է իրական և երևակայական կերպար, ներող, գթացող, կենարար կերպար: Վարկած կա, որ կտավի համար բնորդ է եղել հայ բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանը, որը Սուրենյանցի մտերիմ ընկերն էր: Այսօր Վ. Սուրենյանցի «Դաստառակը» ցուցադրվում է Հայաստանի ազգային պատկերասրահում: Սրբապատկեր հիշեցնող այս դիմանկարը, շատերի հավաստմամբ, օժտված է հրաշագործ հատկությամբ և այսօր էլ մնում է հայտնի ու չբացահայտված, իրական ու խորհրդավոր:

Համաշխարհային նկարչության մեջ՝ առաջին նկարներում, Քրիստոսը պատկերվում է բարի հովվի կերպարով, որ Իրեն նվիրում է ոչխարների փրկությանը: Այս մոտեցումն ունի մարդասիրական նշանակություն և շատ տարածված էր հնում:

Բյուզանդական կայսրության ազդեցության տակ 6-րդ դարից ի վեր հայտնվում է Քրիստոսի՝ որպես տիրակալի կերպարը: Միջնադարում, հատկապես գոթական դարաշրջանում (13—14-րդ դդ.), Քրիստոսը պատկերվում է ցավից տառապող և տանջահարված: Շատ մարդիկ նույնանում էին տառապող Քրիստոսի հետ և մխիթարություն էին գտնում, որ կապված են Քրիստոսի հետ իրենց տառապանքի փորձառությամբ:

Վերածննդի դարաշրջանում (15—16-րդ դդ.) անտիկ գիտելիքներին վերադառնալն զգալի առաջընթաց է գրանցում գիտության և արվեստի ոլորտում: Քրիստոսն ավելի ու ավելի է պատկերվում որպես հերոս կամ տիրակալ՝ ըստ հին օրինաչափությունների: Հայտնի է "Salvator Mundi" («Աշխարհի Փրկիչ») պատկերը, որը համարվում է Լեոնարդո դա Վինչիի ստեղծագործությունը: Նկարում Քրիստոսը պատկերված է Վերածննդի զգեստավորմամբ և բարձրացրած աջ ձեռքով ու խաչված մատներով օրհնություն է բաշխում, իսկ ձախ ձեռքով պահում է բյուրեղյա գունդ:

Այս շրջանում Լեոնարդո դա Վինչին, Ալբրեխտ Դյուրերը, Լուկաս Կրանախ Ավագը և Պիտեր Բրեյգել Ավագը ստեղծել են բազմաթիվ տպավորիչ ստեղծագործություններ:

17—18-րդ դարերում եվրոպական արվեստում իշխող ոճի՝ բարոկկոյի ազդեցությամբ ծավալվում է գունագեղ զգայական մոտեցումը: Ռեմբրանդ վան Ռեյնի գլուխգործոցներն արտացոլում են Նոր Կտակարանի աստվածաշնչյան շատ տեսարաններ:

19-րդ դարում դեռ կային անհատական փորձեր՝ վերաիմաստավորելու Հիսուսի ներկայությունը՝ համապատասխան ժամանակի ոճին: Ռեալիստ նկարիչ Ֆրից ֆոն Ուդեն, օրինակ, նկարել է հասարակ, աղքատ Հիսուսին, որն այն ժամանակ արդիական էր, թե ինչպես է Նա գյուղացու սենյակում ողջունում մի խումբ երեխաների: Նրա կրոնական նկարները ոմանց կողմից ընկալվել են որպես Քրիստոսի պատկերման ազնիվ նորամուծություն, ոմանք համարել են դրանք անարխիստական:

Հիսուսի պատկերներն ունեցել են նաև բնապաշտական բովանդակություն. փշե պսակով կամ փառքով շրջանակված Հիսուսի արյունահոսող սրտի պատկերը ներկայացնում է իրական Նազովրեցուն:

20-րդ դարի ստեղծագործություններում իրենց արտահայտությունն են գտնում ավանդույթն ու սադրանքը, քննադատությունն ու քաղաքականությունը, ծաղրանքն ու երկրպագությունը, հուսահատությունն ու հույսը: Համաշխարհային պատերազմների, ցեղասպանությունների, ատոմային ռումբերի սարսափների ու տառապանքների համապատկերին Հիսուսի պատկերները, առաջին հերթին, Խաչվածի պատկերներն են: Շատ կտավներում էլ Հիսուսը երևում է որպես ժամանակակից մարդ, որը տառապում է սոցիալական պայմաններից: Խաչված Քրիստոսի պատկերը, որ դարեր շարունակ դրոշմվել է մարդկանց գիտակցության մեջ, տառապանքի պատկերն է, որը, կտրվելով իր քրիստոնեական փրկարար նշանակությունից, դառնում է պարզապես մարդկային տառապանքի արտահայտություն: Հիսուսի շատ քիչ պատկերներ կան, որոնք դուրս են գալիս խաչելության թեմայից: Բացառություններից մեկը Ժորժ Ռուոյի Հիսուսն է՝ պատկերված որպես տառապող եղբայր, որը համերաշխ է աշխարհի տառապող մարգինալների հետ: Ըստ նկարչի՝ հավատացյալը չպետք է խուսափի այս բարդ համերաշխությունից: «Քրիստոսը միշտ արվարձանում է, շնորհը ներթափանցում է մարդկանց տառապանքները»,— հայտնում է Ժ. Ռուոն իր տեսակետը Քրիստոսի մասին:

Մեկ այլ բացառություն է Ալեքսեյ Յավլենսկին, որի համար Քրիստոսի դեմքը դարձավ կենտրոնական՝ որպես մարդկային դեմք: Արդեն 1916-ին նա սկսեց նկարել առեղծվածային գլուխներ, որոնք դարձան ներքին տեսլականի խորհրդանիշներ: Մարդու և իրերի արտաքնապես տեսանելի տեսքը նրա համար ավելի ու ավելի անիմաստ էր դառնում: Նրան հետաքրքրում էր ոչ թե արտաքին դրսևորումը, այլ այն, ինչ հայտնվում է ներսում: «Այն ժամանակ ինձ անհրաժեշտ էր գտնել դեմքի ձևը, քանի որ ես հասկանում էի, որ մեծ արվեստը պետք է գրվի միայն կրոնական զգացումով: Դա ինձ համար շատ կարևոր էր»,— ասել է նա: Արվեստը «Աստծո կարոտ է»,— մի ուրիշ առիթով ընկերոջը հղած նամակում գրել է նկարիչը: Իր կյանքի վերջում Ա. Յավլենսկին, որ տառապում էր ծանր կաթվածից, նկարում էր միայն Քրիստոսի դեմքի վերացական պատկերներ: «Ինչի՞ մասին եմ մտածում: Ի՞նչ եմ զգում: Ես նայում եմ իմ ներսին: Օ՜հ, որքան կցանկանայի ինչ-որ աստվածային բան ասել»: Այս խոսքերը Յավլենսկին գրել է իր նկարներից մեկի վրա:

Ժամանակակից նկարչական արվեստում Հիսուսի դիմանկարային պատկերներ գրեթե չկան: Ավստրիացի նկարիչ Առնուլֆ Ռայները 1980-ականներին Քրիստոսին պատկերող իր աշխատանքներում գնացել է ճիշտ հակառակ ճանապարհով: Նկարչության պատմության մեջ Քրիստոսի դասական պատկերների պատճենները նկարվել են նրա կողմից, և ըստ հեղինակի՝ դրանք ինչ-որ չափով թաքցնում են թվացյալ ծանոթը, այնպես որ մարդը ստիպված է այն նորից հայտնաբերել:

Այսպիսով, Քրիստոսի դիմանկարի խնդիրը բոլոր ժամանակներում եղել է արդիական: Այն նաև մարդ-Աստծո պատկերը գիտակցելու նպատակ է ունեցել: Այս ուղղությամբ ամենավճռական քայլը Ալբրեխտ Դյուրերի ինքնադիմանկարն է՝ Քրիստոսի պատկերով և կեցվածքով: Դիմանկարն արտահայտում է մարդու առանձնահատուկ անհատականությունը: Դյուրերն իր ինքնադիմանկարում ելնում է նրանից, որ Քրիստոսի դեմքը մարդու իրական դեմքն է: Նմանատիպ նպատակ ունեցել է նաև Ռեմբրանդն իր «Քրիստոսը մահից հետո» դիմանկարում (1648 թ.), երբ գիտակցաբար պատկերեց Հիսուսին հրեական նախօրինակի հիման վրա: Այստեղ Հիսուսը հայացքը հեռացնում է դիտողից և շատ մարդկային է թվում:

Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ, բ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 15.11.2024 թ.
Տպաքանակը՝ 1265